

# ՆՈՐ ԿԵԱՆՔ

ՀՐԱՏԱՐԱՌԻԹԻԻՆ ՀՆՉՍԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

Հոս ֆրանսերէն քննադիրը զնէնք — զոհացում տաւ յոս համար մեր օտար բարեկամներուն փափարիկ — Չիրիակի հոգեկայ էջին որ հայերէն երեցաւ ՆՈՐ ԿԵԱՆՔԻ ԼՅՐԿ թիօն մէջ.

*Nous avons la joie d'offrir à nos compatriotes une admirable page d'Amilcare Cipriani. L'enthousiasme et le dévouement passionnés qu'il a toujours témoignés pour les peuples opprimés qui luttent contre la tyrannie turque, sont universellement connus.*

*Toute la vie du grand révolutionnaire n'a été qu'une série glorieuse de combats livrés pour la Liberté.*

*Ces paroles, toutes frémissantes et pleines de convictions profondes, sont d'une expérience vécue. Nul doute, qu'elles n'émeuvent, ne secouent et ne réconfortent, comme le contact d'une âme fière, loyale et fraternelle.*

LA REDACTION.

## ARMÉNIENS!

Votre bourreau d'Yldiz-Kiosk vous guette.

Dans sa sombre retraite, peuplée des spectres sanglants de vos frères égorgés, il aiguise sa hache criminelle et homicide contre vous.

La peur qui l'assiège continuellement, le rend encore plus lâche, plus féroce.

Vous n'avez pas de grâce à attendre de cette hyène couronnée.

Votre totale extermination est décidée.

Dans cette âme tremblante, sombre, solitaire et tyrannique, ce qui est décidé, sera exécuté.

Vous êtes à sa merci, à la merci de ses hordes féroces et sanguinaires.

La diplomatie d'Europe, faite d'intérêts, de calculs et d'hypocrisies, a déjà assisté, froide et impassible, à l'assassinat de vos frères, à l'égoisement et au viol de vos femmes, à l'incendie de vos villages, à l'extermination de votre patrie.

Tandis que vous râliez, que vous agonisiez sous le yatagan des Kurdes, elle, éclaboussée de votre sang, laissait faire, et pactisait avec votre infâme oppresseur.

Il n'y a pas d'humanité, de sensibilité, où prime l'intérêt.

Ceux qui, négligeant la nécessité d'une force révolu-

tionnaire nationale, font briller à vos yeux l'espérance d'une intervention diplomatique, vous trompent; s'il vous la promettent, vous trahissent.

Il faut donc, à force d'audace, de courage, d'héroïsme, de grands sacrifices, et, surtout, d'une insurrection forte et intelligemment préparée, et encore plus intelligemment exécutée et commandée, forcer la sympathie des peuples, lesquels, à leur tour, pourraient forcer une intervention diplomatique en votre faveur.

Nos gouvernants encouragent l'égoïsme et l'indifférence pour tout ce qui est grand et noble, la soumission à la force, au vice, à l'argent; cependant il ne faut pas désespérer.

La virilité disparaît, elle fait place à la soumission qui est lâcheté. Mais on aime et on admire le courage chez les autres.

Un peuple lâche et soumis n'est pas digne d'intérêt. Le mépris, c'est son lot. Le votre, doit être une histoire de luttes héroïques, comme elle est de votre martyrologe.

On ne subit pas l'oppression, on la combat.

C'est de la légitime défense d'opposer la force à la force.

Cela ne vaut rien de gémir; il faut réagir, agir, frapper.

Un peuple fort et conscient de sa destinée n'implore des secours ni de dieu, ni des hommes.

Il s'unit, s'organise, s'arme, frappe, et, vainqueur ou vaincu, vivra dans l'immortalité.

Pour cela, il faut être drapé dans une idée.

Une révolution qui ne combat pas au nom d'une idée, n'est pas une révolution. C'est une bagarre que l'histoire méprise et ne daigne enregistrer dans ses pages immortelles.

Une fois éclatée, malheur à ceux qui l'entravent et cherchent à l'arrêter, car une révolution qui s'arrête, signe un arrêt de mort pour ses défenseurs.

Il faut, donc, toujours et toujours, être prêt à l'action: action *intelligente, réfléchie, raisonnée.*

Il y a dans la vie d'un peuple un moment, où il faut agir ou périr.

Alors, pas de pitié pour des ennemis impitoyables! Le sabre dégainé, il faut en jeter le fourreau, et ne quitter la lame qu'avec la vie.

AMILCARE CIPRIANI.

### ԱՊՐԷ՝

Տաճկաստանի—անսահման գերեզմաննոց, ուր մե-  
ռենները կ'արժնան ու վեր կը նետուին երբեմն հողի՛ն  
տակէն—խարուսիկ խաղաղութիւնը այս միջոցիս փո-  
թորկող պէպեքը «Յոյս, Հաւատք, Արութիւն» կը  
պոռան թմրած ու լալկան Հայուն:

Ընդվզումին կրակն է որ յեղակարծ կը բռնկի նս-  
րէն, կը բորբոքի, կը տարածուի համայնածախ ու լա-  
փել կը սպառնայ Բանութեան վայնջական, վիթխարի ու  
խարխուլ Յիշատակարանը որ թրքական կայսրութիւնն  
է: Քարատը ստրկութեան, փտութեան ու արհաւիրք-  
ներու ամբողջ ծերացած աշխարհ մըն է որ հիմերէն կը  
սասանի:

Հոս՝ Ալպանացիներն են որ ապստամբութեան սան-  
ճաղը կը պարզեն, Բանութեան ուժերուն գէժ կը մար-  
տնչին, թիւրք զինուորներու գլուխներ ձողերու ծայրը  
տնկած, յաղթական թափօրներով, թաղէ թաղ կը պը-  
տըտցնեն, խալիֆային եղեռնական հեղինակութիւնը կը  
քամահրեն ու ոտնակոխ կ'ընեն: Անդին՝ Արար ու Քիրտ  
աշիրէթներ ու ցեղեր ահաւոր ընդհարումներով իրարու  
կը բաղխին, գիրար կը բզբտեն, ու ամբողջ Միջագետքը  
պատերազմի պաշտի մը կերպարանքը կ'առնէ: Վալի-  
ներն ու ֆէրիզները՝ անկարող յարգել տալու Երլտըզի  
Բանտարկեալին կամքը՝ ծակէ ծակ կը թխմուին սարսա-  
փահար:

Անիշխանութիւնը կատարեալ է այս պահուս թիւրք  
կայսրութեան մէկ ծայրէն միւսը:

Թուօտան Պարսից Մոցին վրայ ածուխի երկու մթե-  
րանոց կը պահանջէ: Ատէնի անգլիական զօրաբա-  
նակը հրաման կը ստանայ ղեպի ներսերը յառաջա-  
նայ թիւրք զինուորներուն ոտնձգութիւնները ետ մղելու  
համար: Վերջապէս Հիւսիտէն Հարաւ՝ Արեւելէն Արեւ-  
մուտք, ամբողջ Տաճկաստանի երկինքը սպառնալից ամ-  
պերով կը ծանրաբեռնուի, հորիզոնները կը մթազնին  
ու փոթորկին ազգաբար որոտումները ճակատադրա-  
կան Քայջայումին երկնաւոր ղօղանչը կը սկսին զարնել:

Ինչ պիտի ըլլայ մեր վերքը վաղուան անխուսափելի  
պայթումներուն նախընթացին:

Անտարբերութեան, անհոգութեան, չէզոքութեան յա-  
մառ շարունակութիւնը մեր ազգին վերջնական մահացումը  
պիտի նշանակէր: Ա՛լ ատեն է որ ամէն Հայ ցնցուի,  
թօթուէ, մէկզի նետէ իր եսական թմրութիւնը, մոռնայ  
անիմաստ ու ամօթալի պատրուակները որոնց ետին  
փնտոց մինչեւ հիմա իր անպարտաճանաչութեան ան-  
կարելի չքանդանքը:

Անոնք որ Յեղափոխութեան հրամաններուն տակ

կ'ուելու տրամադրութիւնն ու քաջութիւնը ունենալ կը  
սկսին, թո՛ղ առաջ նետուին:

Իսկ պո՛ւք, չէզոքնե՛ր, որ գործելու կորովն ու կրակը  
չէք զգար, շտապեցէ՛ք գոճէ ինքզինքնիդ, ձեր սիրական  
ու թանկագին անձերը պաշտպանել պատրաստուելու:

Տաճարար, անասնաբար մի՛ երկնցնէք նորէն վիզերնիդ  
Քահիճին զանակին: Մ'աբրեցէ՛ք ու բարձրացուցէ՛ք հողինիդ  
ընդվզումին հրայրքովը: Չինուեցէ՛ք ու պաշտպանել զիսցէ՛ք  
պատիւնիդ, իրաւունքնիդ ու կեանքերնիդ: Ուրիշներէն բան  
մի՛ յուսաք, մի՛ սպասէք որ օտարները գան, ձեզի հա-  
մար արեւն թափեն, որպէսզի ազատիք դուք:

Ազատութիւնը չեն խնդրեր, չեն մուրաբ այլ կը պա-  
հանջեն, կ'առնեն:

Հակառակ կարգ մը կեղծ—ազգամոլներու շողջօրթ  
կարծիքին՝ անհունօրէն տխուր բան մըն է պիտի որ  
հայկական շարժումներու սկիզբէն մինչեւ այսօր, արիւ-  
նատ օրերուն, ինչպէս զանգաղ մահացումի ներկայ շըր-  
ջանին՝ Հայ ժողովուրդը ինքնապատահութեան զիտա-  
կից բոպէ մը շունեցաւ: Չուցերը ծալլած՝ ինքնապաշտ-  
պանութեան ու զոհողութեան պէտքը շտեսաւ ու ըս-  
պասեց որ Երկինքը կամ Էրօպան գան զինքը  
փրկելու:

Հայ ժողովուրդը գիտնալու է վերջապէս որ հրաշք-  
ներու դարը անցած է: Եհովա մը Քորեբ լեռը չիջնար  
ու Մովսէս մը՝ դաւազանը օղին մէջ բարձրացնելով՝ Հայ  
Արիւնին «Կարմիր Մովը» չցամքեր:

Անցած է ժամանակը, ուր կայսրեր ու իշխաններ  
օգնութեան կը հասնէին, բանակներ կը հանէին նախառ-  
ուած ու պղծուած քրիստոնէութեան մը պաշտպանու-  
թեանը համար, ու հատած չէ՛ դեռ ատենը, ուր Մարդ-  
կայնութեան վտեմ ու եղբայրական իտէալը՝ իրագոր-  
ծուած ու ընդհանրացած՝ ժողովրդական ազատագրուած  
բանակներ պիտի յարուցանէ՛ յանուն մարդկային բռնա-  
բարուած իրաւունքներուն՝ խորտակելու համար վերջին  
ժանգոտած շղթաները հեռաւոր գերութիւններու:

Քաղրեցէ՛ք ա՛լ եւս օտարին դուր զարնել, օտարին  
գութը հայցել: Մտքերնուդ մի՛ անցնէք որ ձեր խողխո-  
ղումը պիտի կրնայ ձեր փրկութիւնը ապահովել: Իրա՛ւ,  
Ազատութեան ճամբան՝ Արիւնի ճամբան է, բայց Հայ  
Արեան հեղեղները ազատութեան համար թափուող ա-  
րիւնէն չեղան: Մարտախը ազատութեան համար ա-  
րիւն թափել չի՛ նշանակեր: Եթէ մեր զահիճները մեզի  
չջարգէին՝ մենք չէ՛ որ երեք հարիւր հազար նահատակ  
պիտի ունենայինք: Քանի՛ հատ են, անոնց մէջ, որոնք  
զէնքի մը պլլուեցան, որոնք կուռեցան ու զարնելով  
ինկան, անմահացան:

Ազգերը՝ որոնց կը զարձնէք շարունակ ձեր ակըն-  
կալութեան նայուածքները՝ մեր վրայ կը նային, ինչ-  
պէս սպանդանոց առաջնորդուող ոչխարներու ողբալի հօ-  
տի մը վրայ: Կը գթան մեզի, ինչպէս ո ո է մէկը պի-

տի մեղքնար փողոցին մէջ գնդակահար տապալող ան-  
մեղ ու անվաստ անասուն մը: Մարդ կատաղութենէ կը  
փրփրայ երբ կը տեսնէ Հայեր որոնք Հայութեան էր-  
կատմամբ գոյացած այդ զթութեան անպատուիչ զգա-  
ցու՛մը իբր ազգային պարծանք կը համարին ու անով կը  
հպարտանան:

Մինակ չենք մենք թրքական բռնապետութեան  
տակ: Բայց ինչպէս շտեմել ահագին տարբերութիւնը  
որ կայ սարուկ Հայուն ու իրեն բաղդակից քանի մը  
սարուկ ցեղերուն միջեւ:

Հայը, այնքան աղէտներէ յետոյ, զեռ այն սարուկն է  
զոր անպատուած, որուն զխուն զարկած ատենդ «է-  
լէթ էֆէնտիմ», «պէլի էֆէնտիմ» «հագղընըզ վար է-  
ֆէնտիմ» կը պատահանէ: Չկայ մէկը որ այնքան սար-  
սափի մահէն, որքան ամէն օր, ամէն ժամ մեռնող  
Հայը:

Ինչպէս չվրդովուիլ ցնցող, սրտապնդող ու տիրա-  
կան զեղեցկութեանն առջեւ առնական շարժումին՝ Հա-  
յուն բաղդակից սարուկ ցեղի մը, որ կ'ենլէ կը հեռագրէ  
սուլթան Համիտին:

«Համիտիէ իպրահիմ փաշան մեր աւարը տանելէ  
յետոյ, մեր պատիւն ալ քանաքարեց. եթէ հարկ եղած  
արդար փոխարինութիւնը ի գործ կը դնէք, լա՛ւ, եթէ  
ո՛չ՝ մենք պատրաստ ենք մեր վրէժը անձամբ լու-  
ծելու:»

Վայրենի Արարն է աս . . . խրոխտ ու անվեհեր  
սարուկը...

Լսէ՛, Հայ՛ սարուկ, մտածէ՛, շարժէ՛... ապրէ՛:

ԱԶԱՏ ԽՕՍՔԵՐ

ԱՐԻՒՆԷՆ ՎԵՐՉԸ

Շատ հեռու չէ անցեալի այն շրջանը, ուր Յեզա-  
փոխութիւնը, տարօրինակ ու մոզական հմայքով մը, կը  
վրդովէր Հայ հասարակութեան շփոթ հոգին, է՛ն խո-  
նարհ աշխատատեղէն սկսեալ, մինչեւ է՛ն դաժան ունե-  
ւորը: Անշուշտ այս խոռվըր չէր ծներ խորունկ ու իրզ-  
ճահար գիտակցութենէ մը, ո՛չ ալ ամբողջական հաս-  
կացողութիւն մը ու համոզուած յարու՛մ մը կ'ենթադրէր  
յեղափոխական Գաղափարին: Բայց իրական,  
անգիմարբելի ու բռնաւոր թովչութիւն մըն էր ասիկա,  
ուրկից չէին կրնար խուսափիլ, որուն առջեւ տեղի կու-

տային, զինամափ կ'ըլլային է՛ն կոյր ու է՛ն ժանգոտ հա-  
մակերպութիւնները, է՛ն վատ ու է՛ն ստրուկ անկարո-  
ղութիւնները, է՛ն բիրտ ու է՛ն վայրագ շկամութիւն-  
ներն անգամ:

Բռնի ու արուեստական երեսոյթ մը չէր ասիկա, ո՛չ ալ  
հաշուուած ու նպատակաւոր թելադրանքներու արդիւնքը,  
այլ բնական, ինքնաձին, գրեթէ մթնոլորտային տրա-  
մադրութիւն մը: Եւ իրա՛ւ, օրին մէջ բան մը կար  
կարծե՞ս որ կ'այրէր շունչերը, հորիզոնները կը փակ-  
չէին Հայուն նայուածքին առջեւ, հովերը բաներ մը կը  
փսփօային անոր ականջն ի վար ու գիշերները նօրօրի-  
նակ ու անլուր յաճախանքներ կը թափէին անոր տեն-  
դոտ ըունին վրայ:

Յեղափոխական նիստուողին ազդեցութիւնն ու հրա-  
պոյրը ահագին էին այդ օրերուն: «Ի նոցանէ» երեւիլ,  
ինչ երագ, ինչ յանկուցիչ փորձութիւն: Չէք մոռցած  
հարկաւ վախկոտ հեշտանքի պզտիկ սուր սարսուռը զոր  
կ'արթնցնէր՝ յեղափոխական կարծուած երիտասարդի մը  
մուտքը՝ Պօլսոյ հայ սաշուններուն — աւելի ճիշտ պիտի  
ըլլար ըոել ստաններուն — մէջ:

Ու որքան միտի էտմոններ ու պարոն Արամներ —  
այսօր թունդ հակայեղափոխական — ատեն մը՝ այս զրզ-  
ուական կասկածներուն առջեւ՝ «գործը չէին աւերք», ու  
քնդհանառակը, խորհրդաւոր, ստուերտ, ճակատագրա-  
կան ձեւեր ու ծամածռութիւններ կ'առնէին հաստատե-  
լու համար այդ կասկածները ու աւելի հեշտականօրէն զող  
հանկու՛մ մեր Պօլսոյ խաթունի կնիկներն ու աղջիկները,  
երջանիկ այդպէս վայելելով անոնց յուզուած ու տաճուկ  
ուշադրութիւնը:

— Է՛ ինչ նորութիւն կայ նայինք, միտի էտմոն,  
ազգային լուրերէն...

— Ոչի՛նչ, տիկին, միշտ միևնոյն բանն է... ը՛մ,  
ը՛մ, ը՛մ...

Ու միտի էտմոն, ահագնօրէն խորհրդաւոր նայուած-  
քով մը ձեղունը կը ճաթոտէր...

— Միտի՛ էտմոն, մենք օտար չենք... մեզի բաց-  
ուելէ վախնալու պէտք չունիք... Ի՛նչ է նօրէն... ցո՛յց  
կայ, ի՛նչ կայ...

Միտի էտմոն, զիւցազներգական ժպիտով մը ծա-  
մածա՛ծ՝

— Ո՛վ գիտէ... Թեքեա...

Ու անմիջապէս, վօեմ հեգնութեան շեշտով մը, հերքել  
փութալով իր անգիտութիւնը՝

— Ես ալ ձեռնէ աւելին չեմ գիտեք...

Ու տիկին ֆրաշանձեմ՝ ֆուֆուլ հանրմին դառնալով՝  
նանգադատած՝ կը մըմնջէր.

— Ի նոցանէ է նէ... հի՛շ կ'ըսէ քի...



Բայց այս մտան երկար շտեկեց: Թափուած արիւնը այս կեղծիքին ալ վերջ մը դրաւ: Արիւնը ճշդեց օակմանները, որոշեց զիրքերը: Արիւնը անգին ծառայութիւնը մատուց անձնուէրներն ու յամանները՝ ետ, մոյններէն ու դասալիքներէն բաժնելու ու մեծ Տոմին ճշմարիտ դերակատարները, զայն հետուէն կապիտոլներէն զանազանելու: Արիւնը վտարեց Յեղափոխութեան քովերէն, զայն իրենց ունայնամտութեան ու պատիկ հաշիւներուն շահագործող լղրճուկ զէվզէկները: Արիւնը հմայթափ քրաւ՝ Յեղափոխութեան մտածումէն՝ ծերուկ միւսերնուն մէջ մոռցուած խողտուքներ զսպող մեր շնորհալի քաղքենուհիները:

—Քա՛, վա՛յ գլխուս... ա՛ն է եղեր, հատաչեց տիկին Փառանձեմ:

—Ուճուանին վերնայ... Ատտու՛մէ՛ գտնան, անիծեց Փուփուլ հանրմ:

Արիւնը զայրացուց Յեղափոխութեան անհաշտ, կասկածոտ ու ռիսերիմ թշնամի իրենց էրիկները, որոնք պահ մը տարակուսած, պահ մը յուսացած, պահ մը օպասած, պահ մը հաւատարմ ու ակնկալութեամբ ազնււացած, զեղեցկացած ըլլալին չէին կրնար ներել հիմա յեղափոխականներուն: Այս մարդիկները իրենց համոզուած, ընդունուած օտրկութեանը մէջ վիրաւորուեր էին արդէն, հանդուրժելով երբեմն արհամարհոյանդգնութիւնը «նոր հասածներուն», իրենց զակըններուն, որոնք չէին զողղար՝ իրենց պէտ՝ Բանութեան առջեւ, որոնք առնելիքուրի տիրական ձեւերով կը խօսէին, կը պահանջէին, կը օպանային թիւրքին, որպէս թէ Հայաստանը իրենց մալը ըլլար...:

—Չափերնները, յաղթանակեց Գէորգ աղան, կոտորուեցան, օտակեցան... օ՛խ ըլլայ...

—Ատ պալտըրը չըլպաններուն օայիէն մե՛նք փասուեցանք, եղրակացուց Ռափիկ էֆէնտին, ա՛լ ասկից վերջը Բնչ երեսով պիտի խաբենք տաճիկները...

Արիւնէն վերջը, մտան փոխուեցաւ:

Առաջ, յեղափոխական ձեւանալը վայելուչ էր, շիջ էր, շահաւոր էր: Հիմա յեղափոխական կասկածուիլը՝ տգէղ, հրէշային, փաստակար, աղէտաւոր:

Միտիւ էտմոնները ու պարոն Արամները առաջինները եղան ասիկա ըմբռնող ու իրենց զիրքը անմիջապէսնոր հոսանքին յարմարցնել աճապարող:

Ու հասաւ օր մը, որ ա՛լ ետ Յեղափոխութեան հակառակ խօսիլը անհրաժեշտ դարձաւ «խելացի, շնորհքով մարդ» նկատուելու համար:



Ինչ եղաւ յեղափոխականին դրութիւնը այս վատերու, ստրուկներու, ծառաներու անարգ զաշնակցութեան առջեւ:

Արիւնէն Դարձողները նախատուեցան ու լքուեցան վայրագօրէն: Անոնցմէ շատերը զարնուեր էին կոսիւն մէջ ու հիմա կը քաշկատուէին վիրաւոր: Ո՛չ մէկ եղբայրական ձեռք երկնցաւ իրենց:

—Յեղափոխական է... Թո՛ղ սատկի, շո՛ւնը, հաչեց հայ բարերարը:

Ուրիշներ զնգաններէն կ'իլլէին սպառած, կմախացած, զառամած: Լոյսը գրեթէ մոռցեր էին, ու հիմա անկից աշուրնին զօշոտուած՝ գլխու պտոյտ կ'ունենային ու՝ զեփ զեղին՝ կը դանդաչէին օտարութեան ճամբաներուն վրայ: Ո՛չ մէկը գնաց բռնել թեւերնուն: Սկսան խնդալ: Օ՛ դոխային վատութեան ցրքիչը:

—Մօ՛, ցնդե՛ր է, ապուչեց՛ր է, լմնցե՛ր է...

Ամէն տեղ ատելութիւն, ամէն տեղ կասկածանք, ամէն տեղ վրէժխորութիւն ելաւ, ծառացաւ յեղափոխականին առջեւ, ամէն բերնէ անէծք, ամէն գրչէ նախատինք մայթեց հայ գործիչին երեսն ի վեր: Սխրալի պարոններ, որոնք կեանքերնուն մէջ՝ օր մը օրանց՝ չէին ճանչցեր ուրիշին համար իրենցմէ բան մը զօհելու՝ վերջապէս մարդկային՝ փորձութիւնը, որոնք՝ երբ իրենց զլխէն մազ մը պակօի՝ ամիս մը սուգ կը բռնեն ատոր համար, որոնք, վտանգին պահուն, իրենց զողահար ետականութեան կոյուղիներուն մէջ իջեր, պահուրաբ, անշարժացեր էին՝ հրապարակ խոյացան յանկարծ՝ աօիւծ կտրած՝ ու քարկոծել փորձեցին մարդիկ, որ իրենց արիւնէն, իրենց կեանքէն երկու ձեռքով տուեր էին, ընդհանրական ազնիւ ու մեծ իտէալի մը օրրուն:



Այս ամօթալի էջը չպիտի մետաէր սակայն Հայ Յեղափոխական Պատմութիւնը, այս ցաւազին ու աղէտաւոր կացութիւնը չպիտի օտեղծուեր, եթէ՛ իր զերին արժանի, ազգային ճակատագրին երկիւղած ու անշահախընդիր ծառայութեան ընդունակ ու վայրկեանին պէտքերուն աշխուրջ զիտակցութեան կարող մամուլ մը ունեցած ըլլայինք, եթէ անոնք, որ՝ Արիւնէն վերջը, յաւակնութիւնը կամ պաշտօնը ունեցան մողովուրդին խօսելու՝ անխախտ համոզումներու և անզրդուելի հատաքի մը տուած հզօր ինքնավստահութեամբը՝ զէմ կանգնիլ շտապէին վատութեան եւ Ուրացումի հոսանքին, հոգեկան ու մտաւոր տոկունութիւնը ունենային պարզաներէն չազդուելու, պարագաները նուաճելու ու օրացաւ խնամքը՝ պարագաներէն ո՛չ թէ անձնապէս չը փասուելու, այլ անոնցմէ քաղելու գերագոյն օգուտը Գաղափարին վերջնական հարկադրութեանը համար: Փոխանակ ամօթաճար ու վախկոտ, կամ պարզապէս շահախնդիր ու դաւաճան զիջումներով պղծելու յեղափոխական հպարտ ու անյեղի իտէալը, զայն ամէն սօսի յարմարցնելու, ամէն քիմքի ու ամէն հոգիի մատչելի

ընել ճարտարուորելու ամպարիշտ մտահոգութեանը, փոխանակ անցեալը մոռցնելու, եղածը արդարացնել յանդգնելու և անոր համար ներդրութիւն խնդրել արտորաւ ստորին ձեւերով, երկզկի ժպիտներով, ամէն բան ըսող ու բան մը չնշանակող խօսքերով ժամանակ շահերու՝ պէտք էր որ անկեղծօրէն, խրոխտաբար ու ի հարկին՝ բրտօրէն նետէին ժողովուրդին երեսն ի վեր այն քանի մը անդիմադրելի ճշմարտութիւնները, որոնք միայն պիտի կրնային կեցնել ստրուկ ու վարանոտ զանգուածը — վայրավատին տարազնելու միջոցին ինկ, — պիտի ցոյց տային անոր իր դժբաղդութեան միակ պատճառը իր անպարտաճանաչութեան հաստատութիւն մէջ ու Գիտակցութեան մեծ ու անմոռանալի Գասը պիտի տային անոր, ահաւոր աժմէութեան մը մէկհատիկ զուգահիւսութեամբ անհունօրէն համոզիչ:

Պէտք չէր ձգել, որ ժողովուրդը ժամանակ ունենար ինքիբոլորուն ենթադրութիւններ ընելու, եզրակացութիւններ հանելու, սխալ ըմբռնումներ գոյացնելու, սխալ ու փաստակար համոզումներ շինելու: Հայ հրապարակագրին պարտքն էր, Արիւնին յաջորդ օրն իսկ Գաղափարին համար ինկողներուն դիակները դեռ չպաղած՝ անոնց կողմէ՝ ելլել ըսելու ժողովուրդին թէ իրաւունք չունէր ան տրանջալու, թէ մեղանշա՞ծ էր ան Յեղափոխութեան դէմ, թէ արժանի չէր եղած ան թշուառութեան, որովհետեւ ոչինչ ուզած էր ալ, ոչինչ ուզած էր զոհել անոր հասնելու համար:

Ահաւասիկ Փաստը, զոր պէտք էր գարնել ժողովուրդին զլիսուն: Ահաւասիկ խօսքը զոր պէտք չէ՛ յոգնիւնք կրկնել: Ովկիանոս մը արիւն, միլիոն մը դիակ անկրօն մարտաւաստներու՝ չպիտի կարող ըլլան երբեք Յեղափոխութիւնը ամօքնել, զայն ստորնացուցիչ գիշումներու, անարգութեան համաձայնութիւններու, մահացու չքմանքներու ստիպել:

\* \* \*

Արիւնէն վերջը, ժողովուրդին առջնորդները չկրնային իրենց կոչումին բարձրութեանը հաւաստիլ: Ողբալի եղան, խեղճուկրակ եղան անոցմէ է՛ն ուղղա. միաներնուէ՛ն անշահախնդիրներն անգամ: Զունեցան մաքի յաղթական արթնութիւնը, լեզուի յանգուպն պատրաստարանութիւնը չչփոթելու, չսահմակելու, չվաբանելու: Համար պարագաներուն բարգոյթեանը հանդէպ: Թեղափոխութեան անձեռնմխելի իրաւունքներուն պաշտպանութեան տիրակէսն ու ջերմեանի մտահոգութիւնը պակասեցաւ իրենց: Համակերպեցան լրբութեան, հանդուրժեցին նախատինքներուն, քաջալերեցին վատութիւնը, մեղսակցեցան մեքենայութիւններուն, դիւրացուցին մատնութիւնները: Ու մէկը չգտնուեցաւ որ ելլար կռիւնէն Գարձոկները ողջունել արժանաւորապէս, մէկը չեղաւ որ ուժգնօրէն, կատաղօրէն, անդիմադրելիօրէն պոռաբ

ուրացող ու շնական մոհմակին դիմաց, ամեհի, իրաւարար, վրիժառու խօսքերը:

— Գո՛ւր, ամենըդ ալ, վատեր, վախկոտներ, ծառաներ, անձնապաշտ ու շահամոլ ստրուկներ էք՝ անկարող ընդվզելու, զոհելու, զինովնալու՝ ձեր իսկ անձին բռնաբարւածն համակերպելու դատապարտուած, դո՛ւք չմասնակցեցաք Բռնութեան դէմ մղուած կռիւն... Անոնք որ խանդավառելու, ըմբոստանալու, զոհուելու, խենդենալու ընդունակ էին, անոնք որ մարդ կոչուելու արժանի էին՝ անոնք չէին կրնար չնետալի կռիւն մէջ... Յեղափոխականները Հայ ազգին է՛ն ազնիւ, է՛ն մաքուր, է՛ն առաքինի: Մասը կազմեցին ու կը կազմեն... անոնք փրկեցին Հայուն Պատիւը վերջնական ու պատմական խաղըութեանէն... Ինչո՞ք ու պարծանք անոց...:

Ու զե՛ս պէտք էր ըսել, խաչագոգութիւնը պաշտպանել կասկածուելու իսկ վտանգով:

— Է՛ն անամօթ խաչագողը ձենէ աւելի իրաւունք ունի Հայրենիքին ներդրութեանը, որովհետեւ իր կեանքը՝ մէջ եղած է վարկեան մը, ուր այդ անարգ խաչագողը անկեղծօրէն, անշահախնդրօրէն, անձնուրացօրէն ծառայած է Յեղափոխութեան, անոր համար իր գոյութիւնը վտանգի մէջ դրած է մէկէ աւելի անգամներ...:

\* \* \*

Արիւնէն վերջը, յեղափոխական զինուորը՝ միս միսակ, իր առեցող ու խորթացած եղբայրներուն մէջ՝ լքուած, հալածուած, նախատուած անոնցմէ, որոնց համար մեռնիլ յանձն առեր էր՝ անկին մը քաշուեցաւ ու լոց: Զինուորին չէր իյնար հարկաւ խօսքով կոտիլ Յեղափոխութեան թշնամիներուն դէմ: Մպասեց: Ոսնուցը չէր գաղթեր, ու պաշտպանութեան ու մաքրագործումի հզօր ձայնը կ'ուշանար: Կտրիճ ու միամիտ կամաւորը դասնացաւ, սիտաւ միտալի, տարակուսիլ, գուցէ զղջալ...: Ու հկաւ օր մը, ուր սխալած ըլլալու երկիւզը ու յանցաւորի սրտառուչ խղճահարութիւններ փորձուեցաւ ունենալ պարտաճանաչ ու անձնուրաց Հայը: Ա՛լ քաշուեցաւ, առջի պէս, արդարացի հպարտութեամբ մը ըսելէ:

— Ե՛ն յեղափոխական եմ...:

Ո՛չ, սակայն, այս վիճակը չի՛ կրնար շարունակուիլ, ու՝ եթէ հարկ ըլլայ՝ մենք պիտի գիտնանք վերջ մը դնել ասոր: Պիտի չհանդուրժենք որ առաջին հանդիպած պատածին, կամ առաջին հանդիպած տիրացուն համարձակի բերան բանալ Յեղափոխութեան դէմ ու լեզուին տալ յեղափոխականներու հասցէին:

Զրի վատութիւններու, աներես ու անպատկառ դրդիւններու, դիւրին ու անպատասխան յարձակումներու շրջանը ա՛լ անդառնալիօրէն անցնելու է:



տակ զարձեր էր ան օրին մրկը: Հիմա անտան էր իր տունը, զէնքն իր անբաժան ընկերը: Իր անունը ա՛լ սար. սափի հոմանիշ էր ամենուն համար: Կառավարութիւնը կը օտակար իրմէ. հազարավէկ միջոցներու զիմած ու փայլուն խոստումներով աշխատած էր զայն հա. մոզել, ողորել, մինչեւ իսկ բարձր պաշտօնով մը զայն վարձատրել խոստացած էր: Չէրքէզ անդրդուելի մնա. ցեր էր սակայն, մինչեւ վերջը, իր լեռնատենջ ըմ. բոստացումին մէջ:

Շիրին Ալիի սպանութենէն յետոյ, երբ Մինաս լեռը քաշուիլ սրոշեր էր, իր փոքրիկ խումբին հետ, իրր արդար ու կենդանի բողոք ճնշուած Հայ գիւղա. ցիին, Չէրքէզը յօժարափոյթ միացեր էր անոր: Մինա. սէն վերջը, ապստամբ խումբին է՛ն կարեւոր անդամ. ներէն մէկն էր ան հիմա: Իրեն համար Եէշիլ Ըրմազի երկու ակերուն վրայ տարածուող անառններուն մէջ, լեռներուն ու ձորերուն խորքերը անձանօթ խորշ մը չկար: Չարքաշ ու կաշմբուն, զմուարութիւնները ար. համարհող և Անկարեղիին մէջէն ճամբայ բացող՝ Չէր. քէզին յանդնութիւնը թէ՛ թիրք և թէ՛ քրիստոնեայ հասարակութեան աչքին առասպելական վիթխարի հա. մեծատութիւններ առած էր:

Մինասեան ասպատակային խումբին լրաբերն էր ան հիմա: Անոր յանկարծական երևումը ամենքը ուրա. խացուց: Ասպատակները նորէն քարայրը մտան ու կը. րակին շուրջը բոլորուելով, սկսան հազարավէկ հարցեր ուղղել Չէրքէզին:

— Երկու շաբաթ է որ բեզ կորսնցուցեր ենք, Չէր. քէզ, ըսաւ Մինասը, ա՛լ մեռածներուն կարգը դատեր էինք քեզի:

— Կատուն ինչքան ալ բարձրէն նետեն՝ միշտ իր թաթերուն վրայ կ'իյնայ, պատասխանեց Չէրքէզը ժպ. տուն, հոգին այնքան շուտ տուող արարածներէն չեմ, աւելցուց ան, հպարտ շեշտով մը:

— Հեռու ու ձօտ տեղերէն խօսի՛ր, Չէրքէզ, ընդմիջեց Կապետը, մինք զուրոյի աշխարհէն լուր չունինք: Արդ. եօք Մարդուան գացի՛ր, Յարութիւնը տեսա՛ր, պիտի կրնա՞ն մեզի օգնել, պէտք եղած ատեն:

— Ատոնցմէ առաջ, ըսաւ Չէրքէզը, աւելի կարևոր լուր կայ: Լօղմանը և Կիւչիւկ Հատանը կառավարու. թեան անձնատուր են եղեր:

— Անձնատուր, ապշած գոչեց Մինասը, թիրքէն լաւ բան կարելի չէ՛ սպասել, այդ մարդիկը ժողովուր. ցի անունովն է որ ոտքի կ'ելեն, բայց միշտ ժողովուրդն է որ կը կեղեքեն:

— Ատ բաւական չէ՛, շարունակեց Չէրքէզը, լսեցէ՛ք դեռ, Լօղմանին չափուելութեան աստիճան տրուած է:

— Աւազակ կառավարութենէն աստից աւելին չըս. պասուի՛ր, բացազանչեց Կապետը:

— Կեցի՛ր, չմնցուցի դեռ, պողաց Չէրքէզը, աւե.

լին կայ, Լօղմանին պաշտօն տրուած է մեր խումբը բանել ողջ կամ մեռած...

Ամենքը մէկ իրարու երես նայեցան ասպատակ. ներք, հեզնութեան տարօրինակ ժպիտներով, կարծես ըսել կ'ուզէին թէ անձեռնմխելի են իրենք:

— Կը չափուէ՛նք, կտրեց Մինասը, գաժան ու ար. համարհոտ:

Ու լսեցին պաշ մը: Ամփոփուած ու պրկուած երե. տոյթ մը աւեր էին, աճէնքն ալ կառչած կարծես Լօղ. մանի մտածումին:

Շիրին Ալիէն վերջ, Ճանիգ սանճապի աւազակա. յին պատմութիւնը կուզար, կանգ կ'առնէր Լօղմանի վրայ: Թիրքիսյ մէջ, ինչպէս պէլլաաւութիւնը, աւանդական արիւղակութեան պատկանող ընտանիքներու տիտղոս. ներք թէ՛ ժառանգական և թէ՛ յաջորդական են, անանկ ալ է աւազակապետութիւնը: Աւազակապետի մը հպատա. կութիւնը կամ մահը, ուրիշի մը յաջորդութեան տեղ կը պատրաստէ, ու այսպէս ամէն տարի թիրքիսյ ո և է մէկ անտոկ լեռնային դիրքը կամ անտաքը, որուն մօտէն կ'անցնին միծ ճամբաները, իրենց նոր ու մասնաւոր ա. տազակներն ունին: Շիրին Ալի, Գ սրա Չօճուզ, Քիլ թա. հիր, Մօլլա Եօլճի, Փաշա, Կոո աւազակապետներու պատմութեան է՛ն փայլուն աստղերն են: Կառավարու. թիւնը բնաւ չմիջամտեր այս օրինականցներու արարք. ներուն և յաճախ աւազակապետի մը ներքին հոգեբա. նութեան սկիզբը կ'երթայ, կը կապուի կառավարական պաշտօնեաներու կազմակերպուած խմբակի մը մեղօակ. ցութեանը: Տեղի տալով սակայն անթիւ կրկնուած բո. ղոցներու և՛ ժամանակի մը համար՝ ա՛լ պէտք չունե. նալով հանրային քօակին, այս լեռնային պաշտօնեաները շատ անգամ հանգստաթօշակի կը կոչուին ու կը դառ. նան Միւթէսսարքֆ, Գայմազամ, բանտապետ կամ ոս. տիկանապետ, ասպարէզը ձգելով ուրիշ աւազակի մը որ՝ նոր անունի մը տակ՝ կը սկսի շահատակել, մինչև որ ինքն ալ հանգստաթօշակի կոչուի: Լօղմանը այս թաքազիթ եղողներու վերջինն էր սրուն պաշտօն տըր. ուած էր հետեիլ Մինասին ու իր խումբին, հայ ասպա. տակներուն, որոնք համարձակեր էին հանրութեան շա. հուն համար բողոքելի ու կոռուի:

Թէ ինչպէս Չէրքէզը յաջողեր էր այդ լուրը ձեռք բերել, զաղանիք էր այդ իր բոլոր գործունէութեան մէջ Չէրքէզը տեօակ մը խօքհրդաւոր ձեւեր ունէր: Ա. նիկա մուտք ունէր ամէն տեղ: Աղքատին տնակէն մին. ջեւ հարուստին ապարանքը, ամէն զուտ բաց էր իր առ. ջեւ, ու դէպի ըմբոստ խումբը եղած ո եւ է աննպաստ ու նենգաւոր դիտում, կառավարութեան կամ ուրիշներու կողմէ, Չէրքէզին տեսողութենէն ու լսողութենէն չէր վրիպեր:

— Հին պատմութիւն մըն է որ նորէն կը կրկնուի, ըսաւ Մինասը: Շիրին Ալին ալ ճիշտ միևնոյն չըջան.

ներէն անցաւ և վերջ ի վերջոյ իր կարգն առաւ Լօր-  
ման ու Կիւլիկ Հասան՝ ինչքան ալ ճարպիկ ըլլան՝ Շի-  
րին Ալիին չեն կրնար հաւատարիլ ու իրաւունքի ու Ար-  
զարուծեան դէմ հալածանքն՝ որքան ալ խիտ ըլլայ ու  
յամառ՝ դարձեալ յաղթութիւնը կը մնայ առաջինին։  
Ֆողովորդին տառապանքը մեզ անպատակ շինեց,  
այդ տառապանքը վերցնելու համար նահատակութիւն  
փառք է։

—Մենք միշտ քու հետդ ենք, Մինա՛ս, յարեց Կա-  
պետը, բայց ասանկ պարագաներու մէջ ամենքս ալ  
Թաթոսին պէտք ունինք, ա՛ն է որ մեր գործունէութեան  
ուղղութիւնը կուտայ, ա՛ն է հղեր մինչեւ հիմա մեր յա-  
ջողութեան բանալին, նորէն անոր պէտք է դիմենք այս  
նոր քայլը առնելէ առաջ։

—Բայց ի՞նչ պէտք է ընել սա ժանտարմաներուն,  
որոնք այնքան շարիք հասուցեր են երէկ գիւղին գըլ-  
խուն։ Եթէ առանց պատիժի ձգենք սր երթան՝ վաղը  
սիրտ կ'առնեն ու աւելի համարձակ կը կրկնեն իրենց  
չարագործութիւնները, մէջ բերաւ Յովհաննէս զրգուած  
ու յուզուած կերպարանքով մը։

—Այդ ժանտարմաները այսօր ալ հոս են, վաղն ալ,  
պատասխանեց Կապետը վստահօրէն, երբոր ուզենք, կա-  
րող ենք անոնց գասր տալ, հիմա պէտք է որ ժամ առաջ  
Թաթոսը տեսնենք մէյ մը։

—Պէտք է Թաթոսը տեսնել, վճռեց Մինասը, Չէր-  
քէզի բերած լուրը բաւական լուրջ խորհրդածութեան ար-  
ժանի է, մենք ինչքան ալ խորհինք՝ հետևանքները նա-  
խատեսելու կարող չենք, մենք զենքի համար, կուտելու  
համար ստեղծուած ենք, Թաթոսի նմանները՝ խորհելու,  
նախատեսելու, կարգադրելու։ Այսօր իսկ պէտք է Թա-  
թոսը գտնենք։ Չէրքէզը կը մտածէ մինչեւ իրիկուն մի-  
ջոցներուն վրայ ու իրիկուն կ'առաջնորդէ մեզի։ Յրեկե  
Գապա Ճէվիզի անտառներուն մէջ կ'անցնենք, իրիկուն  
դէմ Բէսթէնէ Կէօիչի կը բարձրանանք ու վարժապետը  
կը գտնենք։

—Ալ իրիկունը կը պատմեմ Մարգուանի ու Յարու-  
թիւնի վրայով, ըսաւ Չէրքէզը, արդէն բաւական ուշ է,  
պէտք է ժամանակին հասնիմ գործերուս, ու շափը միայն  
ըսեմ որ բերած լուրերս բարի են։

Արեւ մինչեւ զէնիթն էր հասած և աշնան մէզը ցրուե-  
լով ձորամէջերու և լեռներու յաջորդական շարք մըն էլ  
երևան հանած։ Անտառի թաւուտին մէջ անհետացան  
ասպատակները զէպի Գապա Ճէվիզ տանող կածան-  
ները։ Չէրքէզ անոնցմէ զատուելով էյրի ֆիրազի ճամ-  
բան ձեռք առաւ և զարվերին ոլորումներուն մէջ ա-  
նեկութեամբ։

(Շարունակելի)

ՔԱՆԱԲԱՆԸ

—Միրիճան աղան ալ բռներ, բանտ տարեր են։

Երբ նախ եւ առաջ այս անհաւատալի, անբարեկեցի  
լուրը տարածուեցաւ, թաղին մէջ ոչ ոք գտնուեցաւ հա-  
ւատաք ընծայող. բայց հետեւեալ օրը, երբոր ոստիկան-  
ները եկան Միրիճան աղային տունը խուզարկելու, կինն  
ու զաւակները ոստիկանատուն առաջնորդելու եւ գրեթէ  
պաշարման վիճակի վերածելու իր փողոցը, այն ատեն  
ամէն մարդ, թաղին մէջ, ստիպուեցաւ ընդունիլ այդ  
անհեթեթ իրողութիւնը։

Սակայն զարձեալ Միրիճան աղան ճանչցողները կը  
պնդէին որ անպատճառ գիւրիմացութիւն մը, սխալմունք  
մը կար գործին մէջ և թէ մէկ երկու օրէն ամէն բան  
պիտի յուսարանուէր ու Միրիճան աղան պիտի վերա-  
դառնար իր բնասանիքին ծոցը։

Օրերը անցան և ոչ միայն չվերադարձաւ, այլ իր  
տան ու իրեններուն շուրջը ոստիկանական հսկողութիւն-  
ները կրկնապատկուեցան։

—Քոմիթէին մէջն է հղեր, կը փոփային իրարու  
ականջն ի վար թաղեցիները զարմանահար ապշու-  
թեամբ։

Միրիճան աղան քոմիթէի անդամ, այս երկու ան-  
հաշտելի բռները իրարու միացած այնպիսի հակազը-  
րութիւն մը կը ձեւացնէին որ ա՛լ մարդու տրամա-  
բանելու, խորհրդածելու կարողութիւնը կը կաշկանգուէր,  
կ'անդամալուծուէր։

Օրերով իր մտերիմ բարեկամները մերժեցին այդ-  
պիսի իրողութիւն մը ընդունիլ, սակայն անողոք ճըշ-  
մարտութեան առջեւ ստիպուեցան տեղի տալ։ Զախ-  
ջախիչ երեւոտերեսութիւններու մէջ Միրիճան աղան  
պարտաւորուած էր խոստովանիլ իր անդամակցութիւնը  
յեղափոխական խմբին հետ, վտանգաւոր թուղթեր զըտ-  
նուած էին տունէն և նոյնիսկ ըսողներ կային թէ պոմպա  
պահած է եղեր տանը վերնախորհրդը։

Հիմա ա՛լ իր մտին քննութիւններն անգամ լմըն-  
ցած՝ ու զատապարտութեան վճիռը կար տրուելիք։ Գը-  
րասենեակը կնքուած կը մնար և իր նստած տան դու-  
ռը երկու ոստիկան և քանի մը լրտեսներ զիչեր ցորեկ  
պաշարած էին, մտնող ելլողները հօկելու համար։ Ա-  
նօգուտ յոգնութիւն անշուշտ, որովհետև Ռիրիճանի մը-  
տերմագոյն բարեկամներն իսկ ա՛լ հեռաւոր ծանօթներու  
կերպարանքը կ'առնէին եւ ոչ թէ աւունը զալու, այլ իր  
բնական տան ընկալի փողոցներէն անցնելու անգամ  
օրրտ չէին ընէր։

\*\*\*

Պաւստոսի վաշխառուի մը զաւակ՝ Միրիճան աղա կանուխէն իր ազգակիցները կեղեքելու, ամէն միջոցնե-  
րով դրամ շահելու, ու է ապօրէն կամ օտորնացու-  
ցիչ պարագաներու առջեւ շքնկրկելու տրամադիր հայ  
առոււորի մարդն էր: Պօլիս եկած հաստատուած էր  
առանձինն տարիէ ի վեր եւ գործնական կեանքի յա-  
ջողութեան զլխաւոր յատկութիւններով օժտուած, խո-  
րամանկ, ճարպիկ ու անպարկեշտ, կրցած էր քիչ շատ  
փայլուն գիրք մը շինել իրեն: Իր զլխաւոր կամ մանա-  
ւանդ տիտղոսաւոր գործն էր պատերազմական նախա-  
բարութեան ձիթապտուղ եւ կաշի մատակարարել, բայց  
ատկէ դուրս, առհաւուրեան անդիմադրելի բնազդէն  
մղուած՝ բողոքաճիւղութիւն ալ կ'ընէր իր հայրենակից  
զաւառացիներուն: Գեանամած, սողոսկող բնաւորութեամբ  
կրցած էր թիւրքերու համակրութիւնը շահիլ եւ իր խա-  
բերայ գործառնութեանցը վրայ աչք գոցել տալ: Ա-  
նոնց քով իր կեղծաւորութիւնը ու շողօքօթութիւնը  
այնչափ հրահանգած, այնչափ առաջ տարած էր օր  
ա՛լ ընական, գրեթէ անկեղծ տրամադրութեան մը փոխուած  
էր ան: Ճշմարտապէս երկիւղածութիւն մը կը զգար  
թիւրքերու նկատմամբ եւ կը հաւատար թէ անոնց լուծը  
պէտք էր անպակաս ըլլար մեր վիզէն: Պարաւոր զե-  
րութեան տակ ծեծուած, ճղակտոր եղած հայն էր ան իր  
օտարութեան բոլոր արատներովը:

Երբ յեղափոխական շարժումը սկսուեալէն զալ կա-  
մաց կամաց ու օր մըն ալ մահու եւ կենաց խնդիր մը  
զառնալ Հայուն համար, Միրիճան աղա ափիբերան  
եղաւ եւ տեսակ մը գայրոյթ, գրեթէ ասեղութիւն մը  
զգաց իր արենակիցներուն դէմ որոնք կը փորձէին իրենց  
տիրոջ՝ Տաճկին՝ լուծը թօթափել:

Հակառակ իր կրկնապատկուած գետնաքարշութեանց,  
հայկական շարժումը պատճառ եղած էր որ թիւրքերը  
քիչ մը կասկածոտ աչքով նային Միրիճան աղային  
եւ նախկին վստահութիւնը ցոյց չի տան իրեն: Յեղափո-  
խութիւնը քանի տարածուի կը օտանար, այնչափ դժուա-  
րին, գրեթէ անտանելի կը դառնար Միրիճանի վիճա-  
կը եւ օր մըն ալ եկաւ ուր ա՛լ սկսաւ նիւթապէս փա-  
սել իր գործառնութեանց մէջ, պարզապէս հայ ըլլա-  
լուն համար:

Թիւրքերը որոնք մինչեւ այն ատեն գինքը հաւատա-  
րիմ ծառայի մը տեղ դրած էին, սկսան կասկածոտ,  
խոժոռ աչքով նայիլ իրեն եւ իր շողոմարար, սմտեղուկ  
գետնամածութիւններուն առաջուան քաջալերանքները  
չընծայել:

— Գետինն անցնի այդ յեղափոխութիւնը որ մեր  
տունը կը կործանէ կոր, կ'ոռնար Միրիճան, երբ իրեն  
զաղափարակից բարեկամներու հետ առանձին եղած ա-  
տեն օրուան գէպքերուն վրայ խօսք բացուէր, խերքերնին  
անիծելու է այդ ետեպսիդներուն... Աստուած վկայ, եթէ  
ո՛վ ըլլալինն գիտնաս՝ կ'երթամ կառավարութեան իմաց

կուտամ... հե՛մ առանկով բուն ազգասիրութիւն ըրած  
կ'ըլլամ:

Ու երկար հոգեբանական տեսութիւններու մէջ կը  
մտնար ապացուցանելու համար թէ թիւրքերը ներքնա-  
պէս բարի, ազնիւ, միամիտ մարդիկ էին, թէ միայն  
հետերնին վարուիլ գիտնալու էր, թէ քծնելով, բէշ ու  
ոտք համբուրելով, կարելի էր օրտաբերնին շահիլ ու ամէն  
խաղ խաղալ իրենց:

— Պապա մարդիկ են, կը կրկնէր, քանի մը քե՛սկա՛հ  
ըրէ՛ իրենց, ե՛վեք է՛Ֆէնա՛խ ըսէ՛, գործդ առաջ տար...  
ետքը՝ կ'ուզեօ նէ՛՝ միտքէդ հայհոյէ կրօնքնուն ալ, Մու-  
համէտին ալ:

Միրիճան աղային զգացած բոլոր ընդգուժը բռնա-  
կալութեան եւ ստրկութեան դէմ միայն ատով կ'արտա-  
յայտուէր. այսինքն՝ միտքէն հայհոյել թիւրքերուն դէմ.  
ատով գոհացուցած կ'ըլլար իր հոգիին մէջ մարմնող ըմ-  
բօստութեան բնազդը:

Երբեմն կ'ըլլար օր բարեկամներէն մին պղտիկ դիտո-  
ղութիւն մը ընէր:

— Աղէկ, Միրիճան աղա, ըսածդ շատ շիտակ է  
Պօլոսի համար, բայց զաւանս՛՛րը. խեղճ գեղացիներուն  
հարոտահարութիւնը քիւրտերու ձեռքէն...

Բայց վաճառականը անոր ալ իր վճռական պատաս-  
խանը ունէր:

— Է՛Ֆէնտիմ, զաւանսներուն վիճակը առանկ եկեր  
առանկ պիտի երթայ, քիւրտը հայը կողոպտելով ապրեր  
է մինչեւ հիմա, առկէ ետքն ալ անանկ պիտի ըլլայ, աօ  
ա՛ն է... անոր ճարը չի կայ. զաւառացիներուն վիճակը  
չիտկենք ընելով մեր վիճակն ալ չկորսնցունենք:

Հակառակ Միրիճանի տեսութիւններուն օակայն յե-  
ղափոխական շարժումը օրէ օր առաջ կ'երթար, կը  
ծաւալէր Պօլոսի մէջ եւ նոյն համեմատութեամբ ալ կը  
չեշտուէր թիւրքին ատելութիւնը հայուն դէմ: Կառավա-  
րութիւնը սկսած էր կամաց կամաց հայերու հետ իր  
գործառնութիւնները զազրեցնել եւ հազարումէկ դժուա-  
րութիւն յարուցանել հայ վաճառականներու դէմ: Մի-  
րիճան զգաց որ ա՛լ պատերազմական նախարարութեան  
հետ պիտի չկրնար նորոգել իր պայմանագրութիւնները  
եւ նոյնիսկ գանձել նախկին առնելիքները:

Քիչ զալի իր նիւթական շահերուն մէջ փաստուած՝  
վաճառականին քէնն ու գայրոյթը ազատագրութեան շար-  
ժումին դէմ ա՛լ չափ ու օսհման չի ճանչցաւ: Յեղա-  
փոխականներուն վրայէն իր ատելութիւնը տարածեց ամ-  
բողջ իր հայրենակիցներուն վրայ որոնք ամէնքն ալ  
սկսաւ կասկածելի, յեղափոխական, հետեաբար իր անձ-  
նական թշնամին նկատել: Թաղին քարոզիչին արդի-  
ւեց իր տունը գալ, դպրոցի դասատուներուն բարեք  
զազրեցուց ու ձեռքը հայերէն թերթ չառաւ:

Իր կասկածները անհիմն չէին: Այդ միջոցներուն  
էր երբ պատերազմական նախարարութեան օր եւ է նոր

պարեն մը հայթայթելու համար նուազուրդին մասնակցեցաւ: Միրիճան աղա ամենէն աւելէ գինը իջեցուցած էր տրուելիք ապրանքին, հետեւաբար հետեւալ օրը վտաահօրէն գնաց նոր պայմանագրութիւնը կնքելու:

Թիւրք պաշտօնեան, որ Միրիճանի հին ծանօթնեւորէն մէկն էր և բաւական կաշառք կերած իրմէ, քաղաքավարութեամբ ընկունեց գինը, սուրճ ապսպրել տուաւ, քէյֆը հարցուց և յետոյ այցելութեան պատճառը իմանալով, ի՞նչ որ արդէն կը գուշակէր, ըսաւ:

— Պարապ ձանձրութիւն յանձն առեր էք, պայմանագրութիւնը կնքուեցաւ արդէն Մօշօն էֆէնտիի հետ:

Միրիճան աղա ափիբերան մնաց:

— Բայց, ինչպէ՞ս կ'ըլլայ, ես անկէ նուազ գինով տալ յանձն առի:

— Այո՛, բայց այնպէս որոշուեցաւ որ պայմանագրութիւնը Մօշօնի հետ կնքուի:

— Անկարելի բան է, օրէնքի հակառակ է ատիկա, գոչեց հայ վաճառականը որ ականջներուն չեր ուզեր հաւատալ, պէտք է որ փաշան տեսնամ ու հետը խօսիմ, կ'երևայ որ նուազուրդէն տեղեկութիւն չունի...

— Միրիճան աղա, փաշան աղէկ տեղեկութիւն ունի եւ իր հրամանին վրայ է որ Մօշօն էֆէնտիին հետ պայմանագրութիւնը կնքուեցաւ:

Յետոյ, խորհրդաւոր ձեւով մը, ձայնը ցածցուցած ղէպի Միրիճանի ականջին ծոցեցաւ եւ փսփոսաց:

— Վերէն ասանկ հրաման եկած է, իրատէ կայ, հայերուն գործ պիտի չյանձնուի:

— Բայց ես կառավարութեան հաւատարիմ ծառան եմ, ես այդ սրիկաներուն հետ գործ չունիմ...

Եւ Միրիճան աղան ամբողջ իր կեղծաւոր, սողկական պերճախօսութիւնը թափել սկսաւ, ոտքի ու գարշապարի համբուրանքներու և փարուսներու ամէն աղաչական բանաձեւները յեղյեղեց, թիւրքերէն, արաբերէն, պարսկերէն ձեւերովը, բայց միւսը իր ճակատագրային խօսքը կը կրկնէր:

— Իրատէ կայ, Միրիճան աղա, իրատէ կայ...

Ի գո՛ւր խնդիրը կարգադրելու համար հազարումէկ միջոցներ երեւակայեց, աչք կապելու խաբէական կարգադրութիւններ, հրապուրիչ առաջարկութիւններ ըրաւ թիւրքին: Պաշտօնեան իրատէին անողոք ազդեցութեան տակ սահմակած լսել անգամ չուզեց այդ ընծայարեութիւնները և ցուրտ կերպով մը հասկցուց իր նախկին բարեկամին որ ա՛յլ գինը առանձին ձգէ:

Միրիճան աղա դուրս ելաւ:

Հիմակ, հովանօցը թեկն տակ, շուտ շուտ կը քալէր փողոցներէն, անտեսանելի, շարաշուք Բախտէ մը հալածական: Միշտ մտածած, զգացած էր որ ատիկա պիտի պատահէր վերջապէս, բայց նորէն անակնկալ, յանկարծահաս հարուածի մը պէս իջաւ գլխուն իրողութիւնը: Առաջին անգամ ըլլալով տեսակ մը ոխ զգաց

թիւրքերուն դէմ. անիրաւ տեղը պատիժ կրող ծառային ոխը: Գոնէ իրեն պէս մարդիկը պէտք չէր որ հաւածէին, պէտք էր զանազանել գիտնալ հաւատարիմ հպատակները ապստամբներէն ու ամէնքը մէկ շրով չըլուալ: Բայց այս նորածին զգացումը շատ երկար չտևեց: Յեղափոխութեան դէմ իր ատելութիւնն այնքան բուռն, այնքան արմատացած էր որ շուտով յաղթահարեց միւսին: Չէ՛, կը մտածէր, թիւրքը յանցանք չունի, մերկաներուն քոֆէ է յանցանքը. չափը այնչափ անցուցինք որ անոնք ալ իրաւունք ունին ա՛յլ կասկածելու ամէնէս, ամէնուս վրան գէշ աչքով նայելու... ա՛խ, քանի մը հատը ճանչնայի այդ տուն արող սրիկաներուն: Եւ անուր, դժոխային խորհուրդ մը երկնեց յանկարծ...

Որոշեց հայրենասէր ձեւանալ, յարաբերութեան մասնէլ յեղափոխական մարմիններու հետ և օր մըն ալ երթալ ամէն բան իմացնել կառավարութեան:

Իր խորհուրդին գործադրութեան միջոցներուն վրայ մտածելով, վաճառականը տեսաւ սակայն որ յղացածին չափ ղէրին պիտի չըլլար: Մինչեւ այն ատեն հեռու փախած էր բոլոր անոնցմէ որոնք ազատագրական շարժումին մասնակից կամ համակրող էին և իր անունը իբր թրքասէր ճանչցուած էր. այս պարագաներուն մէջ դժուար պիտի ըլլար մօտենալ անոնց, առանց կասկած յարուցանելու, յետոյ, քանի մը օր անցնելէ ետքը, կատարութեան թափը մեղմացաւ ու գրեթէ մոռցած էր իր սև խորհուրդը, երբ առտու մը գրասենեակը առանձին դասուած միջոցին երկու երիտասարդ ներս մտան: Մին դրանը քով կեցաւ պահապանի դիրքով, միւսը ծանրաքաղ առաջացաւ ղէպի իրեն:

— Ի՞նչ կայ, ո՞վ կ'ուզէք, գոչեց Միրիճան երիտասարդներուն խորհրդաւոր կերպարանքէն գող ելած:

— Հիմա կ'իմանաք, պարոն, պատասխանեց ղէպի իրեն եկողը որ արդէն հասած էր գրասեղանին առջև:

Ու ծոկով կօշիկին մէջէն թուղթ մը հանեց: Երիտասարդին շարժումը մէկ կողմ ըրած էր իր ժաքէթին ծայրը և վաճառականը նշմարեց որ անձանօթ այցելուին տարատին գրպանը բեկովէր մը կար:

— Պարոն, ըսաւ երիտասարդը, կօշիկէն հանած թուղթը Միրիճան աղային տալով, ձեր թրքասէր ու ազգատեաց զգացումները գիտնեք, այսուհանդերձ եկած ենք գրամ պահանջելու ձեռն սուրբ գործին համար. կը յուսանք որ առանց մեզ ստիպելու որ ծայրայեղ միջոցներու դիմենք կը հաճեք ձեզ ինկած բաժինը անմիջապէս վճարել:

— Թրքասէր, ազգատեաց... առ ի՞նչ խօսքեր են, պատասխանեց Միրիճան աղա որ մէկէն հանդարտութիւնը գտեր ու իր սրտումը տուեր էր... ամէն մարդու սիրտը ուրք ինչպէ՞ս կրնաք ճանչնալ...

Վաճառականը ոտք ելաւ, գնաց ղէպի գրամարկը

և երեսուն ոսկի անհրով բերաւ յանձնեց երիտասարդին որ գրեթէ շլացած էր այսքան դիւրին վճարումէն:

— Թէ թուղթին մէջ յիտուն ոսկի գրուած է, բայց գիտէ՞ ա', ատենները շատ գէշ են, ձեր մեծերուն բարև րեք և ըսէք որ մնացածն ալ թո՛ղ պարտքս ըլլայ, անպատճառ կը վճարեմ:

Յետոյ Միրիճան աղա խնդրեց երիտասարդներէն որ նստին եւ բացատրեց թէ շատ սխալ գաղափար կազմած էին իր մասին, թէ ինք բոլոր սրտով յեղափոխական էր, սակայն թիւրքերու հետ իր յարաբերութիւններուն պատճառաւ օտարացած էր թրքասեր ձեւանալ, կայն. յետոյ խնդրեց երիտասարդներէն որ անպատճառ յեղափոխական թերթերէն բերեն իրեն եւ նոյնիսկ բացէն երկու ոսկի վճարեց իբրև բաժնեգին:

— Ա՛խ, ես շատոց կ'ուզէի կերպով մը յարաբերութեան մտնալ ձեզի հետ, աւելցուց, իրարու հետ աղէկ մը ծանօթանանք նէ՛ այն ատեն կը հասկնայք իմ ի՛նչ մարդ ըլլալս, ի՛նչ լոգի կրէլս... ազգատեաց հէ՛, թրքասեր հէ՛... Միրիճանը:

Երիտասարդները՝ շուարած ու ամօթապարտ՝ չէին գիտեր ի՛նչպէս ներողութիւն խնդրել: Երբ մեկնեցան Միրիճան աղա սպանական կերպով զրուիք երեքուց ու ակռաներուն մէջէն սրմուց. — « Ոտքո՞ւնքի եկան, սրիկաները, հե՛մ տուններնիս կը կործանեն, հե՛մ փարա կ'ուզեն, անամօթները... մէյմըն ալ նախատինք ալ կը թափեն զխուզ... Ատուա՛մ զրկեց զիրենց:

Հետեւալ օրը երիտասարդներէն մին ներկայացաւ յեղափոխական ծրարով մը զոր յանձնեց Միրիճան աղային: Վաճառականը հրաւիրեց իր նոր ծանօթը որ կիրակի օր տունը գայ եւ երկարօրէն տեսակցին:

Միևնոյն ատեն իմաց տուաւ ոստիկանութեան որ Միրիճան աղայի հետ խորհրդակցելէ վերջ, շորս զինուած լրտեսներ զրկեց կիրակի օրը անոր տունը պահուր տելու, ժամադիր յեղափոխականը ձերբակալելու համար:

Բայց Միրիճան աղային գծոխային խորհուրդը վիճեցաւ, շուրջ ինկաւ: Յեղափոխականը իմանալով իրեն զէմ օտարուած մատնութեան թակարդը, որոշեալ ժամուն չգնաց Միրիճան աղային տունը:

Ոստիկանները ամբողջ օրը դարանակալ ու պատելէ յետոյ, ապարդիւն վերադարձան օստիկանագետին ջով, որ զայրացած այս յօտախաբութենէն, Միրիճանի մէկ շահատնողական վարպետութեան զոհ ենթադրեց ինքզինքը եւ հրամայեց որ անմիջապէս Միրիճանը ձերբակալեն ու խուզարկութիւններ կատարեն տանը մէջ:

Այդ խուզարկութեան միջոցին գտնուեցաւ յեղափոխական թերթերու ծրարը, զոր Միրիճան շահագործելու գիտաւորութեամբ պահած էր:

Հարցաքննութեան միջոցին ի զո՛ւր իր անմեղութիւնը ապացուցանել ուզեց, ի զո՛ւր պարզեց իր մատնութեան

ծրագիրը որուն ոչ ոք հաւատք ընծայեց և որ օստիկանութիւնը խաբելու համար մտածուած կոշտ ու միամիտ միջոց մը համարուեցաւ:

Տունէն յեղափոխական թերթեր գտնուած էին: Այդ բացայայտ, անհերքելի իրողութիւնը պաշտպանութեան, արգարացման ամէն ճամբաները փակեց իր առջեւ:

Բանտին մէջ Միրիճան ընդունեց նախատինքն բուր ապտակներն ու բոլոր թշնամանքը նուազացուցին: Իր հայութիւնը անամօթ խաղաղութեան մը պէս երեսին նետեցին ամէն վայրկեան եւ իր կրօնքին ու ֆրիստոսին զէմ հայհոյեցին շարունակ: Թիւրքին ու հայուն, բանտապանին ու բանտարկեալին միջեւ եղած անհաշտելի հակառակութիւնն ըմբռնեց հոն և դարաւոր շղթաներու տակ ընդարմացած էութեանը խորը առաջին անգամ ըմբոստացուեց արթնցաւ:

Հո՛ն հասկցաւ թէ ինք ոստիկան մարդ մը ըլլալէ առաջ հաւաքական մարմնոց մը անանջատ մասը կը կազմէր թէ իր կրած շարիքը հակազդեցութիւնն էր այդ մարմնոյն ուղղուած հարուածներուն և թէ ինք անձնապէս որ և է զիջողութեամբ, որ և է ուրացութեամբ չէր կրնար փրկուիլ անկէ: Ու յետոյ, բանտին մէջ, ուր ընդունած մշտական նախատինքի, կոահարութեան տակ, գերութենէ ժանգոտած հոգին մաքրուեցաւ ու նոր շողիւնով մը վառուեցաւ, իրեններուն համար զգացած անիմաստ ու անուշ հակառակութիւնը՝ թիւրքին զէմ ցցուած արգանակն ատելութեան մը փոխուեցաւ: Նոր բանտարկուած ատենը միշտ զգուշացած էր բանտակից հայերու հետ տեսակցելէ, վախնալով որ ատով կրնար իր վիճակը ծանրացնել: Կամաց կամաց մտեցաւ անոնց եւ իր մխիթարութիւնն ու յոյսը անոնց մօտ գտաւ: տեսաւ որ այդ բանտարկուածները որչա՛փ աւելի ազատ ու անկախ էին արդէն իրենց գաղափարներովն ու հաւատքովը այն ստրկամիտ հայերէն որոնք գուրք իրենց փոքրոգութեան ու վատաստութեան մէջ թաթխուած՝ անարգ ստորնութեան տակ կը կարծէին ազատ ըլլալ:

Ա՛լ բանտը քաւարան մը եղաւ իրեն իր դարաւոր աղտերէն սրբուելու համար և երբ ամիսներ յետոյ ընդհանուր ներումի մը առթիւ ազատ արձակուեցաւ, առջի մարդը չէր ալ ան:

Համոզուած ու ամէն զօհողութիւններու պատրաստ յեղափոխական մը զարձած էր Միրիճան, անձնական ունիւթական շահերու գեանաքարշութիւններէն ինքզինքը փրկած: Բանտը ազատ մարդ ըրած էր զինքը:

ԱՐՅԻՆԵՆԻ ԻՆՏԵՐՆԱԿԱՆ ՆՈՐ ԵՐԵՒՈՅԹԸ

Մեծապէս շահագրգռական ու կարևոր հատոր մը պիտի կրնար գրուիլ, եւ պէտք է որ գրուի, Արևելեան խնդրին բնաշրջումին վրայ, Պելլիների գաշնագրէն ի վեր: «Թո՛ղ Անգլիա եւ Ռուսիա համաձայնութեան մը յանդին, մնացեալը բան մը չէ»: Նիքոլա Ա.ի այս համարաւոր խօսքերը գործարկի պատերազմէն առաջ Սըր Համիլթն Սէյմրի կ'ըսէր, ճշմարիտ էին կէր գար մը, Նաւարենէն մինչեւ 1878ի կարգադրութիւնը. բայց այդ բանաձեւին օրը ա՛լ անցած է: Երկու պետութիւնները որոնց համաձայնութեամբը հիմակ Արևելեան խնդիրը կրնայ լուծուիլ, այլ եւս Անգլիա եւ Ռուսիա չեն: Թըրքական կայսրութեան ճակատագիրը Ազրիականէն մինչև Պարսկային Ծոցը պիտի կարգադրուի Տեւտոնին ու Սլաւին միջեւ համաձայնութեամբ մը կամ կտիւով մը: Վիլհելմ կայսեր քաղաքականութեանը մէջ չկայ մաս մը աւելի որոշապէս իր անձնականը քան այն որ այս համաձայնութեան համ ընդհարումի հարկը անխուսափելի կ'ընծայէ: Պիզմարը Ֆրանքոսու համաձայնութեան մը ստուգութիւնը տաօր տարի առաջ գուշակեց, հաստատման թուականն ալ մօտաւորապէս նախատեսելով: Բայց իր պաշտօնավարութեանը ջանաց, ամէն հնարաւոր միջոցներով, այդ վտանգին առջեւը առնել: Պուկարական տագնապէն յետոյ Պիզմարը իր վերջին թուղթը խաղաց երբ Ալեքսանդր իշխանին յափշտակուե՛ր ներեց: Հակառակ Աւստրիոյ դժգոհութեանը, 1877ին այն համարաւոր յայտարարութիւնը ըրաւ թէ «Պալքաններու մէջ գերման շահերը Բոսնիանացի զինուորի մը սօկորները գոհելու չափ արժէք չունին»: Եւ Ռուսիոյ հետ գաղտնապէս այն համաձայնութիւնը գոյացուց որով զայն կ'ապահովէր Երրեակ նիդակակցութեան զլիւար գաշնակցին՝ Աւստրիոյ դէմ: Բայց այս ամէնը փոխուեցաւ Պիզմարըին անկումովը: Իր յաջորդը Կոմս Քարրիլի, երիտասարդ կայսրէն ստացած ուղղութեամբը, մերժեց Բեզլըպուրկի հետ վերանորոգել «պապականութեան գաշնագիրը»: Այս մերժումին պատասխանները եղան՝ Քրոնշտատի հանգէտները եւ Ֆրանսայի մերձեցումը: Վիլհելմ կայսրն ալ մէկէն սկսաւ սուլթանին բարեկամութիւնը մշակել: Այս տաս տարուան տևողութեանը մէկ կողմէն Ռուսիա շարունակեց իր գաշնակցութիւնը զօրացնել Հանրապետութեան հետ, միւս կողմէն ալ՝ Վիլհելմ կայսրը արտակարգ կորովով եւ բեղմնաւոր միջոցներով առաջ տարաւ Թիւրքիոյ զօրավիգ ըլլալու եւ զայն շահագործելու քաղաքականութիւնը, ու կամաց կամաց Անգլիան եւ Ռուսիան գրեթէ զուրօ հանեց Թիւրքիայէն:

Գերմաններէն Թիւրքիոյ առևտրական լեզուն ըլլալու

վրայ է Անգլիացի այցելու մը անմիջապէս կը զգայ իր մայրենի լեզուն տեղ կ'ընէ: Պոլիս գերմաններէնը գործածելու առաւելութիւնը: Ու կ'է գերման ճամբորդի համար թըրքական պահանջները ամէն պապականութիւն կ'ընծայեն: Պ. Միլլը իր նոր գրքին մէջ կը բերէ Անգլիացիներէ լսածը թէ՛ «յիմարութիւն պիտի ըլլայ ծածկել թէ՛ Թիւրքիոյ մէջ անգլիացի հպատակ մը ըլլալու անպատեհութեանէ զատ ուրիշ բան մը չէ»: Գերման ձեռնարկները որոնց ամէն առթիւ ուժ կուտայ գերման կառավարութիւնը, թէ՛ Պալքանները եւ թէ Փոքըր-Ասիոյ մէջ ամէն ինչ իրենց առջեւէն կը քաշեն կը տանին: Վիլհելմ կայսեր զեպպանը Պոլիս գերմանացիի մը, որ Հալոց օգնելու փափաքը կը յայտնէր, կ'ըսէր. «Չեզի համար բան մը չեմ կրնար ընել. մտքէս չանցնիր թոյլատրել որ մարգասիրութիւնը մեր առևտրական շահերուն միջամտէ»: Պարոն Մարշալ զեպպանը տեւտոն մենաշնորհաւորներու շահերը այնպիսի գործունէութեամբ եւ յաջողութեամբ կը պաշտպանէ որ երբէք այդպիսի ընթացք մը զիւսնագիտական պաշտօններու մէջ տեսնուած չէր: Գեո քանի մը շարաթ առաջ կողմակի լըյո մը ներքին կացութիւնը յայտնեց: Երոպական պայուսակներու բացման խնդրին առթիւ գերման զեպպանը իր պաշտօնակիցներէն զատուեցաւ, գերման շահերը պապականութեամբ Հայտարար Փաշայի քարափին շինութեան մենաշնորհին ստացմամբ:

Ռուսիա երկար ատեն հաճոյքի ու տհաճութեան խառնուրդով զիտեց Արևելքի մէջ գործերուն այս նոր կերպարանաւորումը: Երբ Գերմանիա կուգար Անգլիան խախտել իր տեղէն եւ անոր վաճառականութիւնը իրենովը փոխանակել, Ռուսիա կ'ուրախանար: Բայց իր տհաճութիւնը շատ ակներև էր, երբ գերման զեպպանը Պաղտատի երկաթուղիին մենաշնորհը կը ստանար Տէօյլէ Պանքային համար, հակառակ ուս զեպպանին խախտանարար ամէն ջանքերուն: Պիզմարը ըսած էր թէ «առևտրական հակառակութիւնները քաղաքական բարեկամութեանց չեն միջամտեր», հաւաստում մը ուր ներկայ պարագային մէջ շատ գոհացուցիչ չէր կրնար երևնալ: Վոսփօրէն մինչեւ Պարսկային Ծոցը երկաթուղիի մը շինութիւնը այնպիսի ձեռնարկ մըն է զոր քաղաքականութեանէն անջատել անկարելի է: Վիլհելմ կայսրը իր անձնական խանդավառութեամբը անշուշտ թեւ ու թիկունք պիտի չհանդիտանար այդ ծրագրին, եթէ անիկա քաղաքականութեան հետ սերտ առնչութիւն ունեցած ըլլար: Անուրանալի իրողութիւն մըն է թէ Փոքըր-Ասիան գերման գաղթավայր մը դարձնելու երազը հզօրապէս ազդած է գերման երևակայութեան վրայ: Ետ զիւրըմբոսելի է որ գերման իշխանութեան փափաքը ըլլայ ձեռքի տակէ գաղանապէս գործել, Ռուսիոյ կասկածները փարատելու համար, ու Տէօյլէ Պանքային ներկայացուցիչն ալ, Տօք. Սիմէնս ամէն ջանք կ'ընէր

գաղթային ծրագրին համար խանգավառեալներուն պեր-  
ճախօտութիւնը լռեցնելու, որպէս զի թիւրքերը չվրդովին:  
Բայց նոյն ինքն Տօք. Սիմէնո որ մենաշնորհը ստա-  
ցաւ, մինչ կը պախարակէր Փոքր-Ասիան գերման գաղ-  
թավարը մը ընելու համար եղած շատախօսութիւնները,  
ինքն իսկ կը յայտարարէ թէ Փոքր-Ասիան հայրենիքին  
համար շտեմարան մը պիտի ըլլայ Պաղտատի երկա-  
թուղիին շնորհիւ:

Անշուշտ կրնայ յայտարարուիլ թէ գաղթավարի  
մը հաստատութիւնը Պաղտատի երկաթուղիին կէտ նը-  
պատակին չէ: Այո՛, այդպէս է. բայց անոր կողմակի  
հետեանքը պիտի ըլլայ: Ամէն պարագայի մէջ, այդ  
մեծ երկաթուղին է. Պոլսէն մինչեւ Պաղտատ Գեր-  
մանիոյ համար այնպիսի շահեր պիտի ստեղծէ, զորս  
առանց պատերազմի կարելի պիտի չըլլայ ջնջել: Վիլ-  
հելմ կայսեր նպատակն է բարոյապէս Գերմանիոյ կը-  
ցել Փոքր-Ասիան, որ գաղթավարի մը համար սքանչելի  
յարմարութիւն ունի եւ հին աշխարհին ռազմական կեդ-  
րոնն է: Վոսփորի վրայէն կամուրջը, որ Պաղտատի եր-  
կաթուղիի ծրագրին մաս կը կազմէ, ամբողջ աշխարհի  
զեկուցում մը պիտի ըլլայ թէ է. Պօլիսը Սլաւիս ճան-  
կէն Տեւտոնիս անցած է, և թէ, այն միևնոյն կառա-  
վարութիւնը որ Պալմիրի բանալին ունի ձեռքը, անիկա  
Սեւ Ծովուն ալ բանալին առած է:

Այս կացութիւնը սուր կերպարանք պիտի ստանայ  
այն օրը երբ Պաղտատի գծին շինութիւնը օկտի, ինչ  
օր տեղի պիտի ունենայ մաքսային սակագիններու խնդրին  
կարգադրութենէն յետոյ, վասն զի այն ատենն է որ  
Թիւրքիա պիտի կարողանայ ջիւղմէթրիի երաշխաւորու-  
թիւնը ապահովել: Ու Վիլհելմ կայսրը ամէն ջանք պիտի  
ընէ իր ուզածին պէս կարգադրել գործը:

Երբ Պաղտատի գիծը կը օկտի Պարսկային Ծոցին  
ձօտենայ, երբ անոր սահմանեալ վերջակէտը, էլ Քիւլֆեթ  
այլ ևս նաւահանգիստ մըն է ուր գերման նաւատորմը  
կրնայ ամենայն դիւրութեամբ խարսխել, ու Վոսփորի  
վրայէն կամուրջն ալ կը ձգուի և հաւանօրէն ամէնը  
յառաջիկայ տասը տարուան մէջ կ'աւարտի, այն ատեն  
այլ ևս անհնարին պիտի դառնայ Պիզմարքին պաշտ-  
պանած ռուսեկերման բարեկամական յարաբերութիւնը:  
Մօսկի Արևելքի համար Տեւտոնը եւ Սլաւն է որ պիտի  
կուրին:

Բայց սպասելով այդ ապագային, առ այժմ Աւստ-  
րիա խիտ խռովեալ է Ռուսիոյ մասին: Կոմս Կոլու-  
խովսքի պատգամաւորներու գումարումին մէջ վրդովեալ  
լեզուով խօսեցաւ Պալքաններու մէջ Ռուսիոյ ձեռք ա-  
ռած միջոցներուն վրայ: Անշուշտ Աւստրիոյ արտաքին  
գործերու նախարարը այդ սճով պիտի չխօսէր եթէ  
Պալքանի մէջ «իրաց արդի կացութիւնը» ամփոփոխ  
պահելու համար Աւստրիոյ եւ Ռուսիոյ միջեւ գոյացած  
նախկին համաձայնութիւնը իր բոլոր զօրութիւնը պահած

ըլլար: Բայց Աւստրիա այսօր կը գտնուի հանդէպ այն-  
պիսի իրողութեանց զորո չի կրնար ընդունիլ: Եւ այդ  
«իրողութիւնները» չէին կրնար գոյութիւն ունենայ ա-  
ռանց Ռուսիոյ մեղաւկցութեան: Մօսկի Արևելքի մէջ  
Վիլհելմ կայսեր քաղաքականութեան ընդարձակումը  
պարտաւորեց Ռուսիոյ արտաքին գործերու նախարարը  
իր քաղաքականութիւնը փոխել: Ուրիշ խնդիր էր Ռուսիոյ  
համար՝ թողատրել Աւստրիոյ որ գէպի Սելանիկ յա-  
ռաջանայ, մինչ միևնոյն ատեն ինքն ալ գէպի Պօլիս եւ  
Տարտանէլ պիտի ընթանար, ուրիշ խնդիր է՝ հանդի-  
սատեա մեալ Աւստրիոյ գէպի Սելանիկ ձօտենալուն, և  
փոխանակ Ռուսիոյ՝ Գերմանիոյ տիրապետութիւնը տե-  
նել Պօլիս և Տարտանէլ: Տարբերութիւնները զգալի են:  
Բեղրպուրի ուրեմն պարտաւորեցաւ վերադառնալ սլաւա-  
կան քաղաքականութեան, որով միայն կրնայ Գերմանիոյ  
ազգեցութիւնը ջլատել: Ու այս նպատակին համար  
Մակեդոնական եւ Ալպանական խնդիրները արդի հան-  
գամանքներուն մէջ Ռուսիոյ պէտք եղած զէնքերն են:

Մակեդոնիան ահեղապէս գէշ կը կառավարուի.  
ստեղծուած է միճակ մը որ ապստամբութիւնը անխու-  
սափելի պիտի ընէ, որով ամբողջ Արևելեան խնդիրը  
պիտի վերաբացուի: Ռուսիա հիմակ բան մը պիտի չընէ  
հաւասարակշռութիւնը խանգարելու նպատակաւ, բայց  
եթէ պայթումը ներքէն տեղի ունենայ, ան ատեն Ռու-  
սիա, ինչպէս կ'երևի Կոլուխովսքիի խօսքերէն, ինքն ալ  
հետեանքներուն համեմատ ազատօրէն պիտի գործէ.  
այսինքն՝ Աւստրիոյ հետ համաձայնութիւնը չեղեալ  
պիտի նկատէ: Պ. Չինովիէֆ մէկ ձեռքով Մակեդոնիա  
զրգոում առաջ կը բերէ, միւս ձեռքով զսպում: Ամէն  
բան ցոյց կուտայ թէ Բեղրպուրի Մակեդոնիոյ ինք-  
նավարութեանը կը ձգտի, որով Աւստրիոյ ճամբան՝ գէպի  
հարաւ՝ կը փակէ: Ահա այս իրողութիւնն է որուն հա-  
մար Կոմս Կոլուխովսքի ըսաւ թէ «Աւստրիա չէր կրնար  
զայն ընդունիլ»: Այս յայտարարութիւնը շատ ձեռնտու է  
Լոմստորֆի, վասն զի անգամ մը եւս ցոյց կուտայ թէ Ա-  
ւստրիա միշտ սլաւ ազգայնութեանց «բանտապահի» զե-  
րին մէջն է: Ու այս միջոցին ալ Գերմանիա ձեռքի տա-  
կէ Թիւրքիոյ հետ է: Այս պաշտպանութիւնը միտումն  
է Պերլինի դաշնագրին, ու զեղծութեան վարչութիւն մը  
ներքից թշնամանք մըն է հանրային զգացման գէմ:  
Ռուսիա հետեւաբար, ինչպէս կը տեսնուի անգամ  
մը եւս սլաւներուն ամբողջ յոյսն է: Ռուսիա նօրէն  
յաշնոցեալ Սերպիան, Պուլհարիան և Գարատաղը հա-  
ւասարապէս թէ իրեն քաշել թէ իրարու ձօտեցնել: Չօր-  
օին միջեւ համակրութեան կապն է Մակեդոնիոյ ինք-  
նավարութեան նպատակակէտը: Իրաւ է որ այս նպատա-  
կին իրականացումը ամէն մէկուն շահերուն ու տեղու-  
թեանցը կը հակառակի, բայց լաւագոյն կարգադրութիւն  
մը պիտի ըլլայ քան թէ Աւստրիոյ զբաւումը, ու պիտի

վերջնէ այն մեծ գայթակղութիւնը որով Սերպերը եւ Պուլկարները՝ յանուն Մեծ Պետութեանց՝ իրարու արին կը խմեն:

Այսպէս ահա Աւստրիոյ Հետ «Պայքաններու մէջ իրաց կացութեան պահպանումի» համաձայնութիւնը Ռուսիոյ թողատրեց չորս տարի, անդին՝ Մայրաքոյն Արեւելի մէջ՝ իր գործը տեսնել ու հիմակ ալ հնարաւոր կ'ընէ Սերպիոյ Հետ համաձայնութիւնը բարդել Գարաւազի հաւատարմութեանը եւ Պուլկարիոյ հլութեանը:

Բայց ուրիշ միջամտող մըն ալ կայ: Ալպանիոյ խնդիրը Հոռոմի եւ Վիեննայի միջեւ յարաբերութեանց մշտապէս զրգոյնը մըն է: Սիրամիտն Քլեթրովեցու գծին ծրագիրը Աւստրիան Սելանիկի Հետ ուղղակի Հաւազորդակցութեան մէջ գնելով, պիտի ամրացնէ կեդրոնական երկու կայսրութեանց ռազմական եւ տնտեսական տիրապետութիւնը Պայքաններուն մէջ: Այս տեսակ մը մենաշնորհը իտալիան քաղաքական ու առևտրական շատ աննպաստ գիրքի մը մէջ պիտի գնէ:

Ընդհակառակը՝ միւս ծրագրեալ հակագիծը որ Աւստրիականն ղեկի Տանուր կ'իջնէ երկաթէ Գանբուն տակ, անցնելով Աւստրիոյ մէջէն, նպատաւոր է թէ իտալիոյ եւ թէ՛ Ռուսիոյ եւ թէ՛ ասոր պաշտպանեալներուն: Կը մնայ հիմակ տեսնել թէ իտալիոյ եւ Սլաւներուն միջեւ շահու համաձայնութիւն մը պիտի կարենա՞յ բաւական զօրեղ հակակշիռ մը գտնալ Գերմանիոյ եւ Աւստրիոյ միացեալ տնտեսական եւ ռազմական զօրութեանը:

Ամէն պարագայի մէջ, գերագոյն ելքը այդ երկու համախմբութեան միջեւ է: Մակեդոնիոյ բաղձը - Արևմտեան Եւրոպայի սպասած ատենէն շատ աւելի կանուխ - ցոյց պիտի տայ թէ քսաներորդ դարուն համար ամէն խնդրի մէջ վճռական ազդեցութիւնը Տետոնիսն թէ Ռուսին ձեռքը պիտի ուլայ:

Իսկ Անգլիա՞ ինչ պիտի ընէ: Ժամանակ է որ այս երկիրը Արևելեան խնդրին ապագան որոշ ծրագրով մը գիտէ:

**ՄԱԿԵԴՈՆԻՈՅ ՇՈՒՐՋԸ**

Մակեդոնական Քոմիթէն մինչեւ Պոլսոյ դուռը Հասած կրնայ նկատուիլ: Հիմա՞ իր գործողութեանց զխաւոր կեդրոնավայրը Էտիրնէ եղած է: Հրոսախումբերը համարձակօրէն կը դործեն թիւրքիոյ մայրաքաղաքէն քանի մը ժամ միայն հեռաւորութիւն ունեցող մեծ քաղաքի մը շրջակաները:

Հրոսախումբերէն մէկը յուլիս 17ին յանկարծ կո-

խեց Մուսթաֆա պէյին ազարակը ուր պիտի բռնէր Էտիրնէի կուսակալ Միւշիթ Արիֆ փաշան: Դժբաղդաբար - Հրոսակներուն համար - այս վերջինս անկող հիւրերգն ժամանումէն քիչ մը առաջ արդէն մեկնած էր: Հրոսակները բաւականացան հափափելով ազարակատիրոջ որդին, Նուրի պէյը, զոր ատին մէկտեղ տարին: Յափրշտակեալը եւրոպացի մը չէր, որուն կեանքին համար Դուռը պատասխանատու ըլլալով, հետամտը փրկանքի միջոցաւ զայն ազատել: Էտիրնէի իշխանութիւնը ժամատարմանը հանեց Հրոսակներուն ետեւն, բայց անոնք իմացուցին թէ իրենց կարողութեան վեր էր ու եւ է բան մը ընել: Ան ատեն հետեւակ ու հեծեալ ջոկատներ յրկուեցան: Կանոնաւոր ճակատամարտներ տեղի ունենալով Հրոսակներէն վեց հոգի սպանուեցան եւ երեք ալ բռնուեցան: Թիւրք զինուորներէն ալ շատ մեծ նոդներ եղան: Նուրի պէյ ալ ծանրապէս վիրաւորուելէ յետոյ, մեռաւ: Թիւրք իշխանութիւնը թէ սպանուած է թէ ձերբակալուած պուլկարները լաւ հագուած սրբուած ու քաջազէն սպառազինեալ տեսնելով կը յայտարարէ թէ Հրոսակախումբը պարզ աւազակախումբ մը չէ, այլ մակեդոնական Քոմիթէին մէկ ճիւղը: Կ'ենթադրուի թէ այս միևնոյն խումբն է որ քանի մը օր առաջ Քրքք Քիլիսէն լեռ տարաւ Թէոտար Միխալ Օղլու հարուստը, զոր յետոյ թող տուաւ 2,000 ոսկիի փրկանքով: Այդ միևնոյն խումբն է որ յուլիս 14ին Քրքք Քիլիսէ Աւէջ Օղլուի տունը մտնելով ամբողջ ընտանիք մը սրակոտոր բրաւ: Նմանապէս Կ. Պոլսէն կը հաղորդուի որ թիւրք եւ պուլկար սահմանազլիսին մօտերը Մալքոլլար, քանի մը ժամուան տեւողութեամբ ընդհարում մը տեղի ունեցեր է 35 հոգիէ բաղկացած Պուլկար խումբի մը եւ թիւրք սահմանապահ զինուորներու միջեւ: Երկու կողմէ ալ կուրի գաշտին վրայ ինկողներ գտնուեր են: Պուլկար սահմանազլիսին ուրիշ կողմերն ալ պուլկար զիւղացիները կրակ ըրած են թիւրք զինուորներուն վրայ: Ասոնք սկսած են հայածել իրենց վրայ յարձակողները որոնցմէ 38 հոգի բռնեց են, մէջերնին երկու պուլկար քահանայ ալ կայ: Սահմանազլիսին ուրիշ կողմերն ալ պուլկար խումբեր երեւան եկած են:

Ինչպէս ակներև կը տեսնուի Եւրոպական թիւրքիոյ էն վտանգաւոր կողմերը հրգեհը կը ճարակի: Կացուցութեանը չափազանցօրէն ծանր կը թուի: Թայմը խմբազրական մը նուիրելով Մօտաւոր Արևելի այս նոր վիճակին, շատ մեծ վախ կը յայտնէ թէ պայքաններուն կողմը եւրոպական խաղաղութեան պահպանումին զէմ ահեղ սպանալիքներ կերևան:

### ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

#### ՆԱՄԱԿ Կ. ՊՈԼՍԷՆ

Տարագիր Տ. Մատթեոս Եպիսկոպոս Իզմիրլեան որ մինչեւ հիմա անտրտուն չէր տաներ իր տառապանքներն ու զրկանքները, վերջերս բնդարձակ բողոքագիր մը զրկած էր Օրմանեանին ու Վարչութեան ուղղեալ:

Օրմանեան, թունդ ելած, ահուգողի մէջ, բողոքագիրը զբաւ Քաղաքական Ժողովին առջև Բայց ոչ ոք կրցաւ համարձակիլ խօսիլ անոր վրայ: Ամենքն ալ, սահմաւած, շլորած, Իզմիրլեանի արդարացի բողոքագրին առջև, իրարու երես կը նայէին սպո՛ւշ, սպո՛ւշ:

Սուլթան Համիտի գլխութիւնը հայցել պէտք էր այս մեծ Կենդանի նահատակին, հայ տիպար եկեղեցականին համար: Բայց Օրմանեան կ'առարկէ թէ՛ «Կայսրը չուզէր որ յիշուի մեր թագրիրներուն մէջ Իզմիրլեանի անունը»: Երկու տարի առաջ, Թահսին պէյ բոսր է իրեն թէ՛ բանտարկելոց եւ աքսորելոց մէջ երկու անուն, ներ կան, զորս սուլթանը չուզեր լսել, Իզմիրլեան եւ Հասթաբաճում Պոյաճեան (Սասնոյ հերոս Մուրատը) աւանանքը, որոնք սոսկալի կերպով իր ջիղերուն կը զբաւէին եղբր:

Չենք յուտար որ Իզմիրլեան սրբազանին բողոքագիրը արդինք մը ունենայ, քանի որ Օրմանեան եւ իր ժողովականները անոր անունը յիշել անգամ կը վախնան ու կը զուշանան:

Յունաց Եօվակիմ պատրիարքին վերջնաութիւնը մեծ ոգեւորութիւն յառաջ բերած է յոյն ժողովուրդին մէջ: Ներսէս պատրիարքին ժամանակակից այս ուղղամիտ ու անշահախնդիր յոյն պատրիարքը անցեալները փոխադարձ այցելութեան եկաւ մեր Պատրիարքարանը: Լուրջ ու պատկառելի զէմք մը, պարթև հասակ, խորթաթափանց նայուածք որ ինքնին բան մը կ'ազգեն զինքը ուշի ուշով գիտողին վրայ: Պատրիարքարանի մեծ սրահին մէջ, մինչ Եօվակիմ Գ. գրուածք մը կը կարգար, յանուն յոյն հասարակութեան շնորհակալութիւն յայտնելով իրեն եղած ընդունելութիւններուն համար, Օրմանեան կապկածեւ զիմացը անցած ձեռքերը կը շփէր ու թարգմանաբար կը պատասխանէր, իր խօսքերուն մէջ զնեւով քանի մը բառեր որոնք արդէն չափուած ու ձևուած են:

Յոյն հասարակութիւնը մեծամեծ ակնկալութիւններ ունի իր նորընտիր պատրիարքին վրայ, որ իր ճաթին մէջն ալ կը շեշտէր Օրմանեանին թէ՛ «Իբր քայր

եկեղեցւոյ հոգեւորական պետեր, պէտք է որ իբրարու աջակցինք այն ամէն գործերուն մէջ, որոնք կը վերաբերին եկեղեցւոյ օգտին եւ ժողովուրդին խաղաղութեանը»:

Սիսի կաթողիկոսական խնդրոյն մասին, որ կը կարծուէր թէ մօտ օրերը իր լուծումը պիտի գտնայ, այս անգամ ալ տարբեր առաջարկներ կ'ըլլան կառավարութեան կողմէն: Այս նոր դարձուածքն ալ Օրմանեանի մեքենայութիւններուն արդինքն է: Յայտնի կերպով Օրմանեան կաթողիկոսանալու հետամուտ է, և գիտնալով որ Կիրակոս կամ Սահակ եպիսկոպոսներու նախագահութեամբ եղած ընտրական ժողովին մէջ ինք չպիտի կրնայ յաջողիլ ընտրուելու՝ հիմա այնպէս մը ձեւերեւած է որ կառավարութիւնը ոչ խապայեան Սահակ եպիսկոպոսի նախագահութիւնը եւ ո՛չ ալ Կիրակոս եպիսկոպոս Բէքմէզճեանի կաթողիկոսական տեղապահութիւնը օրինաւոր կը ճանչնայ եւ կ'առաջարկէ որ Սիսի մէջ նոր կաթողիկոսական տեղապահ մը զրուի ու անոր նախագահութեան տակ ընտրուի Սիսի կաթողիկոսը:

Եթէ պարտաճանաչ ու իր պաշտօնին գիտակցութիւնն ունեցող պատրիարք մը ըլլար Օրմանեան, տարակոյն չի կայ որ շատ մը գործեր կարգադրուած կ'ըլլային ցարդ, և սուլթանը չէր կրնար եղած օրինաւոր և արդար բողոքներուն բոլորին հանդէպ ալ խցել իր ականջները, բողոքներ եւ խնդիրներ, որոնք կրնային արձագանք զրտնել նոյն իսկ եւրոպական զաշխիռներուն մէջ, քանի որ հայկական հարցը միջազգային խնդիրներու կարգը կրցած է անցնիլ Օրմանեան 300,000 հայ զիններու վրայ զրած իր աթոռը, չլսեր կամ չուզեր լսել արդար բողոքի ձայները, հազարաւոր անմեղներու թափուած արիւնովը տիեզերահռչակուած:

Սուլթան Համիտ նոր ու տարօրինակ հրաման մըն ալ հաներ է: Ու է տեղէ հայ կիներ արգելուած են Պօլիս մտնել: Հայ կիները խիստ հսկողութեան տակ են: Ելլարդի հրէշը ամէն օր անակնկալ մը կը մտածէ ու կը գտնայ Հայուն համար:

Պոլսոյ մէջ թիւրքերը վերին աստիճանի զայրոյթ եւ ատելութիւն կը անուցանեն սուլթանին նկատմամբ: Հարիւրաւորներով կ'աքսորուին ու ծովին յատակը կը զըրկուին: Բօլիսներուն թիւր նորէն կրկնապատկուած է: Փողոցներուն մէջ զինեալ ոստիկաններ տնդոտ շրջաններ կ'ընեն: Պոլիս երկիւղի, կասկածի եւ յուսահատութեան կեդրոն մըն է գարձած:



